ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ

Դպրոցի տնօրեն՝ Ա. Բախսեդյան

30 օգոստոսի 2022թ.

ՈՒՍՈՒՄՆԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՏԱՐԵԿԱՆ ՊԼԱՆ

Շինուհայրի միջնակարգ դպրոց

Տնօրեն՝ Ա. Բախսեդյան

2022-2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. 2021-2022 ուստարվա արդյունքների վերլուծություն_____2

2. 2022-2023 ուստարվա 1-ին կիսամյակի կոմպլեկտավորում_____6

3. Մանկավարժական կադրերի բաշխում_____7

4. Ուսուցիչների որակավորման բարձրացման և մեթոդական աշխատանքներ_____8

5. Ընտանիքների, հասարակության, մշակութային հաստատությունների հետ դպրոցի համատեղ աշխատանքը_____11

6. Մանկավարժական խորհրդի նիստեր_____13

7. Առարկայական շաբաթների կազմակերպման գրաֆիկ_____27

8. Տնօրենի կողմից հրավիրվող խորհրդակցություններում քննարկվող հարցերը_____17

9. Ֆինանսական գործունեություն_____28

10. Ներառական կրթություն_____29

11. Ուսումնադաստիարակչական աշխատանքների օրացույցային պլան 2022-2023 ուստարի_____30

2021-2022 ՈՒՍՏԱՐՎԱ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

1. Ուսումնական աշխատանքների կազմակերպում---2021-2022 ուստարվա աշխատանքային ռեժիմը կազմակերպվել է ըստ ԿԳՄՍ նախարարության կողմից հաստատված կարգի: Դասերը սկսել ենք 2021թ. սեպտեմբերի 1-ին և ավարտել 2022թ. հունիսի 3-ին՝ ապահովելով 30-34 ուսումնական շաբաթ տարբեր դասարանների համար: Ուսումնական արձակուրդները ևս տրվել են ըստ ԿԳՄՍ նախարարության և մարզպետարանի կողմից հաստատված ժամանակացույցերի:Ուսուցումը կազմակերպվել է մեկ հերթով,դասերը սկսվել են ժամը 8:30 -ին, ավարտվել ըստ դասացուցակի, դասի տևողությունը՝ 45 րոպե:

2.Ուսումնադաստիարակչական աշխատանքներ--ուսումնադաստիրակչական աշխատանքները կազմակերպվել է ըստ ԿԳՄՍ նախարարության կողմից հաստատված ծրագրերի և դասագրքերի, չափորոշիչների: Ծրագրերի թերակատարումներ չեն եղել, դասապրոցեսների զգալի մասը կազմակերպվել է դասավանդման նորագույն մեթոդներով, կիրառվել է աշակերտակենտրոն ուսուցման առաջավոր փորձերը՝ հիմնական ուշադրության կենտրոնում պահելով սովորել սովորեցնելու գլխավոր խնդիրը, որի վերջնական նպատակը ուսման որակի բարձրացումն է: Բոլոր առարկաներից տրվել է ստուգիչ գրավորներ, քննարկվել, հնարավորինս վերացվել է նկատված թերությունները, կատարվել համապատասխանին մոտ դասալսումներ տնօրենի և փոխտնօրենների, մ/մ նախագահների կողմից, վերլուծվել և հանձնարարականներ տրվել: Դասապրոցեսը և արտադասարանական աշխատանքները կազմակերպվել են ըստ նախօրոք հաստատված աշխատանքային պլանների, որոնք քննարկվել և հաստատվել են օգոստոսյան մանկխորհրդի նիստում:

3. Ուսման առաջադիմություն և որակ ---- Ուսման առաջադիմությունը կազմել է 98 %, իսկ ուսման որակը՝ 32 %: Ուստարվա ընթացքում ուսման որակի բարձրացման ուղղությամբ կատարվել է տարաբնույթ աշխատանքներ / համագործակցային, խմբային ուսուցում, ռեֆերատների, զեկուցումների, այլ մրցույթների միջոցով, դասերը համակարգչային ծրագրերով կազմակերպելով /, որոնք կարող էին նպաստել աշակերտների ինքնուրույնության և ինքնարտահայտման զարգացմանը: Այդ աշխատանքների շրջանակում անց է կացվել և ուսուցիչների վերապատրաստումներ և նորագույն մեթոդների կիրառում, նոր հրատարակվելիք դասագրքերի քննարկում-փորձարկումներ, դասապրոցեսների համակարգիչներով ուսուցում: Ուստարվա ավարտին ունենք 56 գերազանցիկ և 69 հարվածային աշակերտներ: Օլիմպիադայի մարզային փուլին մասնակցել են հինգ աշակերտներ, որոցից երեքը մրցանակային տեղ են գրավել, իսկ մեկ աշակերտ՝ Գարիկ Հայրապետյանը մասնակցել է հանրապետական փուլին:

4. Աշակերտների շարժը --- Ուստարվա սկզբին 1-ին դասարան է ընդունվել 31 աշակերտ, 12-րդ դասարանում սովորել են 34 աշակերտներ, որոնցից 32 -ն ե ն ավարտել և ստացել են միջնակարգ կրթության սովորական նմուշի ատեստատ, իսկ Գարիկ Հայրապետյանը արժանացել է ,,Գերազանցության,, նշումով ատեստատի և ՈՍԿԵ ՄԵԴԱԼԻ, է ,,Գերազանցության,, նշումով ատեստատի է արժանացել նաև Սեդա Արմենակյանը: 16 աշակերտ մասնակցել է միասնական քննություններին, 6 աշակերտ ստացել է անբավարար գնահատական: 10 աշակերտներ ընդունվել են պետական բուհեր, որոնցից երեքը՝ անվճար համակարգ: 9-րդ դասարանում սովորել են 42 աշակերտ, վկայական են ստացել 42-ը, որոնցից 2-ը՝ Էլեն Ավանեսյանը և Էլեն Հակոբյանը ստացել են ,,Գերազանցության,, նշումով վկայական: 4-րդ դասարանի 39 աշակերտները ստացել են հավաստագրեր և փոխադրվել հաջորդ դասարան:

Տարվա ընթացքում դպրոցից հեռացել են 23 աշակերտ, դպրոց է ընդունվել 14 աշակերտ: Բոլոր աշակերտների ընդունումը և ազատումը կատարվել է գործող կարգին համապատասխան:

5. Դասագրքով ապահովվածությունը ---- Աշակերտների ապահովվածությունը դասագրքերով կազմել է 99%, անվճար տրված դասգրքեր են ստացել 42 աշակերտ , դասգրքերի արժեքը կազմել է **1 684 370** դրամ, որից հավաքագրվել և դպրոցի հաշվեհամար է փոխանցվել **1 684 370** դրամ, վարձավճարների հավաքագրումը կատարվել է 100 % -ով: Նոր ուսումնական տարվա համար պատվիրել ենք 528 վճարովի դասագիրք:

6. Մանկավարժական համակազմ ---- Դպրոցը ապահովված է անհրաժեշտ մանկավարժական կադրերով բացի աշխարհագրություն, ինֆորմատիկա, կերպարվեստ և երաժշտություն առարկաների մասնագետներից: Դպրոցում աշխատում են 42 ուսուցիչներ, որոնցից 33-ը կանայք են, 8-ը՝ տղամարդ, 42 ուսուցիչն էլ ունեն բարձրագույն մանկավարժական կրթություն: Առ 15.07.2022թ. վերապատրաստվել և ատեստավորվել են 33 ուսուցիչներ, իսկ 14 ուսուցիչ էլ նախաատեստացիոն վերապատրասում են անցել երկրորդ անգամ / 5 տարին լրացել է /: Ուստարվա ընթացքում 1 ուսուցիչ է ընդունվել մրցույթով, և չի ազատվել ոչ մեկը, սակայն այս ուստարում հրաժեշտ կտանք երկու երկարամյա մանկավարժների՝ կենսաթոշակային տարիքը լրանալու պատճառով:
Ըստ կարգի հայտարարվել է մրցույթներ աշխարհագրություն,կերպարվեստ, երաժշտության, ինֆորմատիկայի ուսուցիչների թափուր տեղերի համար, առ այսօր ոչ մի հայտ չի ստացվել, հայտերի ընդունման վերջնաժամկետը սեպտեմբերի 6-ն է :

7. Ներառական կրթություն ---- -2021-2022թ. ուստարում ունեցել ենք կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող վկայագրված 13 աշակերտներ: Գործընթացն ընթանում է ըստ կարգի, բոլոր աշխատակիցները ջանադրաբար կատարում են իրենց պարտականությունները:

8.Միասնական և ավարտական քննություններ---- Դպրոցից միասնական քննություններին մասնակցել է 16 աշակերտներ, անբավարար են ստացել /3-7 միավոր/ 6 աշակերտ ,որոնցից 2-ը չեն ստացել միջնակարգ կրթության ատեստատ, քանի որ մեկնել են ազգային բանակ ժամկետային զինծառայության և չեն կարողացել մասնակցել վերաքննություններին, իսկ մյուսների միավորները տատանվել են 8-ից 20-ի միջև: Ավարտական և պետական ավարտական քննությունները կազմակերպել ենք կանոնակարգի, ոչ մի խախտում թույլ չի տրվել, 20 միավոր ստացել է 3 աշակերտ, 7 աշակերտ ստացել են 18-19 / տարբեր առարկաներից 9 և 12-րդ դաս. /, իսկ մյուսների միավորները տատանվել են 8-ից 17-ի սահմաններում, 1 աշակերտ հանձնել է վերաքննություն և ստացել դրական գնահատական / Հայոց եզվի կենտրոնացված քննություն /:

9.ԱՐՏԱՔԻՆ ԳՆԱՀԱՏՈՒՄՆԵՐ ----2021-22 ուստարում դպրոցում 10-րդ դասարանցիների համար կազմակերպել էր արտաքին ընթացիկ գնահատում 4 առարկայից՝ Հայոց լեզու, մաթեմատիկա, Հայոց պատմություն և բնագիտություն/ֆիզիկա, աշխարհագրություն/:

	Որակ, %	Անբավարար, %	Առաջադիմություն, %
Հայոց լեզու	11	19	84
Մաթեմատիկա	0	33	67
Հայոց պատմություն	42	0	100
Անգլերեն	100	0	100
Աշխարհագրություն	44	22	78
Ֆիզիկա	0	100	0

10.Ծնող-դպրոց կապը---Ուստարվա ընթացքում բազմաբնույթ աշխատանքներ են իրականացվել էլ ավելի ամրապնդելու դպրոցի և ծնողների միջև արդեն գոյություն ունեցող լավ ավանդույթները. դրանք արտահայտվել են ծնողական ժողովների,խորհրդատվությունների, տարբեր միջոցառումների կազմակերպման,դասերին ծնողների մասնակցության, դասընթացների, ՀԿ-ների հետ համագործակցությունների և այլ մեթոդներով:

11. Ֆինանսատնտեսական գործունեություն, նյութատեխնիկական բազա----
Ուստարվա ընթացքում ֆինանսական միջոցների նպատակային ծախսում է իրականացվել, ոչ մի հոդվածով գերածախս թույլ չի տրվել, ոչ մի հոդվածով պարտք չունենք:
Ուստարվա ընթացքում փորձել ենք հնարավորին չափով հարստացնել դպրոցի նյութատեխնի-կական բազան: Դպրոցի համար <<Յունիսեֆի>> կողմից վերանորոգվել և կահավորվել է 1 դասարան-կաբինետ, ընդհանուր գումարը կազմել է շուրջ 2 միլիոն դրամ:

Դպրոցի հիմնանորոգումից հետո այն պահպանելու համար օգտագործել ենք բյուջեի սուղ միջոցներից՝ ամենաանհրաժեշտ նյութեր ու սարքավորումներ գնելու համար: Տաք սննդի կազմակերպման համար բյուջեից տրամադրված գումարից ծախսվելու է մոտ 3.081.120 դրամ:

12.Փաստաթղթավարություն ---- Դպրոցում առկա են դպրոցավարության հետ կապված անհրաժեշտ բոլոր փաստաթղթերը, արխիվները: Ժամանակին և ստույգ տրվել են պահանջվող հաշվետվություններ և տեղեկանքներ, զեկուցագրեր:

Սյունիքի մարզի Շինուհայրի միջնակարգ դպրոցի 2022-2023 ուսումնական տարվա 1-ին կիսամյակի կոմպլեկտավորում /սեպտեմբերի 15-ի դրությամբ/

	I	II	III	IV	I-IV	V	VI	VII	VIII	IX	V-IX	X	XI	XII	X-XII	I-XII
Դասարան	1	1	1	2	5	2	1	1	1	2	7	2	2	2	6	18
Աշակերտ	31	31	29	39	130	37	32	34	31	40	174	32	30	36	98	402
տղա	19	18	17	22	76	20	14	19	17	22	92	8	19	12	39	207
աղջիկ	12	13	12	17	54	17	18	15	14	18	82	24	11	24	59	195
Այդ թվում ԿԱՊԿՈՒ			1	1	2		1	5	2	1	9	1		1	2	13

Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների թվաքանակն՝ ըստ ծանրության աստիճանի /2022-20231-ին կիսամյակ/

Թեթև	Միջին	Ծանր	Խորը	Ընդամենը
4	8	1		13

Ռեժիմ՝ 5 օրյա

օտար լեզու՝ անգլերեն, նախատեսվող 3-րդ օտար լեզու՝ ադրբեջաներեն

Կից ներկայացնել բազմահամակազմ դասարանները ըստ 2019թ հոկտեմբերի 14-ի ԿԳՄՍ նախարարի N 22-Ն հրամանի հավելվածի համաձայն

Մանկավարժական կադրերի բաշխում

Համապատասխան առարկաների մեթոդմիավորումների նախագահներ են նշանակվել հետևյալ ուսուցիչները՝

1. Հումանիտար առարկաների՝ Հայոց լեզու և գրականություն, պատմություն - Հակոբյան Ռաֆիկ
2. Օտար լեզուների - Էլեոնորա Կադոմցևա
3. Բնագիտական առարկաների՝ մաթեմատիկա, ինֆորմատիկա, ֆիզիկա, քիմիա, կենսաբանություն, աշխարհագրություն – Գրիգորյան Արշավիր
4. Ընդհանուր զարգացման առարկաներ – Սիլվա Բալյան
5. Տարրական կրթության /դասվարներ/ - Արզումանյան Արևիկ

2022-2023 ուստարվա դասվարներ և դասղեկներ

հ/հ	Դասարանը	Ազգանուն, անուն
1	I	Արզումանյան Արևիկ
2	II	Վանյան Հասմիկ
3	III	Երեմյան Ժաննա
4	IVᴬ	Գրիգորյան Ալինա
5	IVᴮ	Մկրտչյան Աշխեն
6	Vᴬ	Բալյան Սիլվա
7	Vᴮ	Գալստյան Ամալյա
8	VI	Գևորգյան Վերժինե
9	VII	Կադոմցևա Էլեոնորա
10	VIII	Հովհաննիսյան Սոնա
11	IXᴬ	Հարությունյան Սվետլանա
12	IXᴮ	Գրիգորյան Նելյա
13	Xᴬ	Ծատրյան Աիդա
14	Xᴮ	Խաչատրյան Մարինա
15	XIᴬ	Աղամալյան Անդրանիկ
16	XIᴮ	Աբգարյան Նազելի
17	XIIᴬ	Գրիգորյան Լիաննա
18	XIIᴮ	Խանզադյան Գայանե

2022-2023 ուստարում խմբակավարներ են նշանակվել

հ/հ	Խմբակի անվանումը	Խմբակավարի ազգանուն, անուն	Ժամաքանակը
1	Հմուտ ձեռքեր	Սիլվա Բալյան	4 ժամ
2	Մասնագիտական կողմնորոշում	Գալստյան Ամալյա	2 ժամ
3	Առողջ ապրելակերպ	Սահակյան Տիգրան	2 ժամ
4	Ադրբեջաներեն	Սարգսյան Ռաիսա	2 ժամ

Ուսուցիչների որակավորման բարձրացման և մեթոդական աշխատանքներ

Այս բաժնի աշխատանքների կազմակերպման համար կարևոր ենք համարում ուսուցիչների վերապատրաստման հարցերը, մեթոդմիավորումների նպատակային գործունեությունը, դասալսումները, մանկխորհրդի որոշումների իրագործումը, ուսուցիչների մասնակցությունը կրթական ծրագրերի մշակմանը, մանկավարժական հոդվածներ տպագրելուն, մասնակցությունը կոնֆերանսներին և այլն:

Դրանց իրագործման համար նախատեսում ենք կատարել հետևյալ աշխատանքները

ա/ Ավելի սերտացնել կապերը վերապատրաստում իրականացնող կազմակերպությունների հետ:

բ/ Օգտագործել ներքին հնարավորությունները՝ մեր դպրոցի լավագույն և վերապատրաստված, կամավոր ատեստացիան անցած, տարակարգ ունեցող ուսուցիչների միջոցով մեթոդական և մանակավարժական օգնություն ցույց տալու՝ հատկապես սկսնակ և երիտասարդ մանակավարժներին:

գ/ Մեթոդմիավորումների կատարելիք աշխատանքները համարել դպրոցի ուսումնադաստիարակչական գործունեության հիմնաքարը: Մեթոդմիավորման աշխատանքները կատարել ըստ ընդունված կարգի: Մեթոդմիավորման նիստերում քննարկման առարկան են դառնում դասավանդման հետ կապված ամեն ինչ՝ օրվա պլանից մինչև մեթոդական զեկուցում./ դրանք մանարամասնությամբ ներկայացված են մ/միավորումների աշխատանքային պլաններում/:

դ/ Դասալսումների թեման են դառնում դպրոցի ուսումնադաստիարակչական ողջ գործընթացը՝ առաջին դասարանի տառի ուսուցումից մինչև որևէ առարկային դրվածքի խորացված ուսումնասիրում . ուսուցիչների մեթոդամանակավարժական պատրաստվածություն, աշակերտների գիտելիքների յուրացման աստիճանի համակառղմանի ուսումնասիրում , ուսուցման և դաստիարակության ներդաշնակության ապահովում , մեթոդական օգնության կազմակերպում, գնահատման և ինքնագնահատման մեթոդների կիրառման արդյունավետության , թափանցիկության , ճշմարտության ապահովում և այլն:

ե/ Կարևորում է մանկխորհրդի նիստերի օրակարգերում ընդգրկված հարցերի առօրեականությունը, դրանց կատարման համար անհրաժեշտ ռեսուրսների առկայությունը և ակնկալվող արդյունքները, օգտակարության աստիճանը , անդրադարձը և համակողմանի քննարկումը: Դրանց կատարումը պետք է լինի յուրաքանչյուրի պատվիրակված պարտականությունը, դա էլ հաշվի առնելով՝ կազմվել է մանկխորհրդի նիստերի անցկացման ժամանակացույցը, որը ենթակա է փոփոխության…

զ/ Ուսուցիչների ստեղծագործական գործունեության մղելու լավագույն միջոցներից է մեթոդամանակավարժական զեկույցները, որի համար տնօրինությունը պատրաստ է էլ ավելի անել, անհրաժեշտ պայմաններ և նյութատեխնիկական բազա ստեղծել այդ աշխատանքների լավագույնս կազմակերպման համար:

է/ Այսօր կարևոր է նաև ուսուցիչների փորձարարական աշխատանքների կատարումը , իսկ դրա համար անհրաժեշտ մարդկային և նյութական ռեսուրսները առկա են:

Այս հարցը շատ է կարևորվում և հետևողական աշխատանք պետք է տանել այն իրագործելու համար: Ուսուցիչների ատեստացիաների վերապատրաստման փուլին

նախապատրաստվելու լավագույն ձևը, ինքնակրթությամբ զբաղվելն է, ինչին ձգտելու ենք նպատակամղել բոլոր ուսուցիչներին՝ անհրաժեշտության դեպքում տրամադրելով դպրոցում կամ ուսուցիչների մոտ առկա օգտակար նյութերն ու գույքը:

Որպեսզի ամեն ինչ սահուն և անցնցում անցնի, նախատեսում ենք որոշակի թեմաներ և գրականության ցանկ , որը հնարավորություն կտա ուսուցիչներին / ինքնակրթությամբ զբաղվելով / օժանդակել մեթոդմիավորումների աշխատանքների ճիշտ և նպատակային կազմակերպմանը:

Այդ աշխատանքներին թեմատիկան և ժամանակացույցը մանրամասն ներկայացված են մեթոդմիավորումների , դասղեկների աշխատանքային պլաններում, մանկխորհրդի նիստերի օրակարգում , իսկ տնօրինության գլխավոր խնդիրը դրանք ճիշտ ուղղորդելն ու կյանքի կոչելն է:

Այս ենթաբաժնի նախատեսվածի իրականացման համար պատասխանատու են համարվում տնօրենը, տնօրենի տեղակալները, մեթոդմիավորուների նախագահները, գրադարանի վարիչը, դպրոցի խորհրդակցական մարմինների ղեկավարները:

Հ/Հ	Աշխատանքի բովանդակությունը	Կատարման ժամկետը	Պատասխանատու անձ
1	Դպրոցի գրադարանում ստեղծել մեթոդական անկյուն, այն համալրելով նոր մեթոդական ուղեցույցներով, հրահանգներով, ծրագրերով, առարկայական չափորոշիչներով համակարգիչներով,		Գրադարանավար
2	Կազմակերպել դասախոսություններ, զրույցներ նվիրված ուսման և դաստիարակության հարցերին		Տնօրեն, փոխտնօրեններ, դասղեկներ
3	Օգնել ուսումնական կաբինետների կահավորման, դիդակտիկ նյութերի ստեղծման, եղած ուսումնաօժանդակ գրականությունը ճիշտ օգտագործելու հարցերում		Փոխտնօրեններ, Մ/Մ նախագահներ
4	Խրախուսել մանկավարժների ստեղծագործական աշխատանքը, օգնել խորհուրդներով և համապատասխան գրականությամբ		Փոխտնօրեններ, Մ/Մ նախագահներ
5	Կազմակերպել համադպրոցական օրինակելի դասեր		Մ/Մ նախագահներ

6	Բազմակողմանի օգնություն կազմակերպել երիտասարդ ուսուցիչների համար.		Փոխտնօրեններ, Մ/Մ նախագահներ
7	Կազմակերպել ուշագրավ աշխատանքների քննարկումներ, միջոցառումներ մշակել դրանց կիրառման համար		Փոխտնօրեններ
8	Պարբերաբար ինֆորմացիա տալ հետաքրքիր հոդվածների, առաջավոր փորձի մասսայականացմանը վերաբերվող թղթակցությունների, մեթոդական նոր գրականությանը, ուսուցման դիտողական նոր պարագաների և էլեկտրոնային միջոցների մասին.		Մ/Մ նախագահներ
9	Ուսուցիչներին ծանոթացնել ՀՀ կառավարության որոշումների, գիտության կրթության նախարարության հրահանգներին, հրամաններին և այլ նորմատիվ փաստաթղթերին		Տնօրեն
10	Ուսուցիչներին ընդգրկել վերապատրաստման և ատեստավորման նախապատրաստման դասընթացներում/ ըստ անհրաժեշտության/		Տնօրեն Փոխտնօրեններ
11	Ուսուցիչների համակարգչային և ինտերնետային գրագիտության ապահովման համար շարունակել կազմակերպել համակարգչային, ինտերնետային դասընթացներ		Ինֆորմատիկայի ուսուցիչ
12	Ուսուցիչներին մասնակից դարձնել նոր դասագրքերի քննարկումներին, նրանց կարծիքներն ուղարկել ՀՀ ԿԳՄՍ նախարարություն		Տնօրեն

Ընտանիքների, հասարակության, մշակութային հաստատությունների հետ դպրոցի համատեղ աշխատանքը

Դպրոցի և ընտանիքի կապի ամրապնդումը հնարավոր է միայն շահագրգիռ կողմերի հետ սերտ համագործակցության շնորհիվ, որին հասնելու համար անհրաժեշտ է ամենօրյա հետևողական աշխատանք տանել: Այդ աշխատանքներում մեր լավագույն գործընկերը կարող է լինել դպրոցի ծնողական խորհուրդը, որի անդամներն ի պաշտոնե պարտավոր են որոշակի աշխատանքներ կատարել դպրոց-ընտանիք կապն ամրապնդելու, ծնողներին դպրոցի կյանքին մասնակից դարձնելու, օգնելու իրենց երեխաներին արժանի կրթություն և դաստիարակություն տալու գործում: Անհրաժեշտություն է առաջացել ծնողների, համայնքի անդամների դպրոցին <<կապելու>> նոր ու արդյունավետ մեթոդներ ու ձևեր գտնել , որովհետև հներն արդեն իրենց սպատել են , իսկ նորը գտնելը չէ, մեկի ուժերից վեր է , ուստի այս հարցում ակնկալվում է բոլոր օղակների համատեղ ու ստեղծագործ աշխատանքը :

Կարևորում է նաև դպրոցի կապը մշակութային հաստատությունների հետ, որովհետև երեխաների գեղագիտական դաստիարակությունը ուսումնադաստիարակչական գործընթացի կարևորագույն բաղկացուցիչներից է , իսկ դրան հասնելու համար անհրաժեշտ ենք համարում էլ ավելի սերտացնել կապերը Գորիսի պետական թատրոնի , մարզպետարանի մշակույթի բաժնի հետ, որպեսզի կարողանանք կատարել ուսումնադաստիարակչական աշխատանքների այս ենթաբաժինը: Բացի այդ, նախատեսում ենք կազմակերպել էքսկուրիաներ մարզի և հանրապետության պատմամշակութային տեսարժան վայրեր՝ համագործակցելով դասղեկների և ծնողների հետ:

Դպրոցի և ընտանիքի սերտ կապն ապահովում է նաև ծնողական, դասարանական և համադպրոցական ժողովների հրավիրումը: Նախատեսում ենք հետևողական աշխատանքներ տանել, որպեսզի դասղեկական աշխատանքները կատարվեն ըստ նրանց աշխատանքային պլանների,որտեղ պարտադիր պետք է նշված լինեն այն թեմատիկան, ինչն այսօրվա համար կարևոր դեր պետք է կատարի ծնողների և ուսուցիչների համատեղ ջանքերը նպատակաուղղելու՝ աշակերտների ուսումնադաստիարակչական գործընթացը կազմակերպելիս: Ծնողական ժողովները չպետք է դառնան սոսկ ինչ-որ բան արած լինելու համար, այլ դառնա և՛ կապող օղակ և՛ գլխավոր նպատակին հասնելու, առաքելություն իրականացնելու համար առաջին աստիճանը:

Համադպրոցական ընդհանուր ծնողական ժողովները ենթադրում են իրենց մեջ ներառել այնպիսի գլոբալ հարցեր ու խնդիրներ, որոնց լուծումից էլ կախված կլինի ուսումնադաստիարակչական գործընթացի կազմակերպման հաջողությունը: Նախատեսվում է համադպրոցական ծնողական ժողովները հրավիրել ըստ կարգի, իսկ լուրջ նախադրյալների դեպքում՝ ցանկացած պահի:

Քանի որ մեր հիմնական նպատակը քաղաքացիական հասարակության կառուցումն է, ուստի պարտադիր ենք համարում երեխայի իրավունքների պաշտպանությանն ուղղված ցանկացած միջոցառում, որը կփորձենք կազմակերպել և մեր ուժերով, և՛հասարակական կազմակերպությունների հետ համագործակցելով: Այս ուղղությամբ շատ աշխատանք է կատարվել,սակայն դեռևս մեծ անելիքներ ունեն ոչ միայն տնօրենը, տեղակալները, այլև բոլոր շահագրգիռ անձինք, աշակերտական և մյուս խորհուրդները: Տնօրինությունը մշտապես կանգնած են լինում երեխայի իրավունքների պաշպանության առաջին շարքում…..

ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԵՐ

	Նիստի օրակարգը	Ժամկետ	Պատասխանատու
	Արտահերթ նիստ		
	Օգոստոսի 20- 30-ի վերաքննությունների հանձնաժողովների կազմի և ժամանակացույցի վերաբերյալ որոշման ընդունում	**Օգոստոսի 24**	
	Առաջին նիստ		
	1.Մանկավարժական խորհրդի նիստի օրակարգի հաստատում. անդրադարձ նախորդ նիստին (զեկուցող՝ տնօրեն) 2.Դպրոցի 2021-2022 ուսումնական տարվա ուսումնական պլանի հաստատման հարցը (զեկուցող՝ տնօրեն) 3.Հաստատել ուսումնական հաստատության 1-ին կիսամյակի դասացուցակը (զեկուցող՝ տնօրեն) 4. 2021-2022 ուսումնական տարվա դասաբաշխման և դպրոցի ուսումնական պլանի, դպրոցական բաղադրիչի ժամաքանակի բաշխման մասին (զեկուցող՝ տնօրեն) 5. Մեթոդական միավորումների ձևավորում 6. Դասարանների կազմավորման հարցի քննարկում: Ավագ դպրոցում ձևավորված հոսքերի, ենթահոսքերի հաստատում (զեկուցող՝ տնօրեն) 7. 2021-2022 ուսումնական տարվա դպրոցի ուսումնադաստիարակչական աշխատանքների տարեկան պլանի ներկայացում և հաստատում (զեկուցող՝ տնօրեն) 8. Տնօրենի տեղակալների, մ/մ-ների, դասղեկների աշխատանքային պլանների հաստատում	**Օգոստոսի 30**	

	9. Վերաքննությունների արդյունքների հաստատման, սովորողների փոխադրման հարցի քննարկում, 11. Տարեկան ուսումնադաստիարակչական միջոցառումների հաստատում (զեկուցող՝ տնօրենի ուսումնական աշխատանքի,ՄԿԱ գծով տեղակալներ, ԴԱԿ)		
	Երկրորդ նիստ		
	1.Մեթոդական զեկուցում. Ուսումնական գործունեության մոտիվացիան և դրա զարգացման ուղիները: 2. Առողջական խնդիրների պատճառով ֆիզկուլտուրայի դասերից ազատվող աշակերտների հարցը: 3. Ընթացիկ հարցեր:	**Հոկտեմբեր**	
	Երրորդ նիստ		
	1. Գործընթացի և սովորողների ուսումնական առաջադիմության արդյունքների, թեմատիկ պլանների և էլեկտրոնային մատյանների վարման հարցեր: 2. Առարկայական օլիմպիադաների հանձնաժողովների կազմի հաստատում 2. Ընթացիկ հարցեր	**Նոյեմբեր**	
	Չորրորդ նիստ		
	1. Օրակարգի հաստատում: ***2.*** 12-րդ դասարանի միայն դրական գնահատականներ ունեցող աշակերտներին պետական ավարտական քննություններին թույլատրելու մասին: 2022-2023 ուստարվա 2-րդ կիսամյակի ուսպլանի հաստատում: ***3.*** 12-րդ դասարանի 2-րդ կիսամյակում նույն դասարանից տարբեր առարկայական խմբերի կազմում և հաստատում:	**Դեկտեմբեր**	

	Հինգերորդ նիստ		
	1. Ուսումնական հաստատության մանկավարժական խորհրդի նիստի օրակարգի հաստատում. անդրադարձ նախորդ նիստին (զեկուցող՝ տնօրեն) 2. 2022-2023 ուսումնական տարվա 1-ին կիսամյակի ընթացքում կատարված ուսումնադաստիարակչական աշխատանքների և սովորողների առաջադիմության արդյունքների ամփոփում (զեկուցող՝ տնօրենի ուսումնական աշխատանքի գծով տեղակալ) 3. Ուսումնադաստիարակչական աշխատանքների 1-ին կիսամյակի տարեկան պլանի կատարման մասին (զեկուցող՝ տնօրեն, տնօրենի ուսումնական աշխատանքի գծով տեղակալ) 4. Ուսումնական հաստատության 12-րդ դասարանի հունվարին անցկացված պետական ավարտական քննությունների արդյունքների քննարկում (զեկուցող՝ տնօրեն) 5. Տնօրենի տեղակալների, մեթոդական միավորումների, դասղեկների, ուսուցչի օգնականների աշխատանքների քննարկում (զեկուցող՝ տնօրենի ուսումնական աշխատանքի գծով, ՄԿԱ գծով տեղակալ) 6. 2022-2023 ուսումնական տարվա 2-րդ կիսամյակում դպրոցի ուսումնական պլանի քննարկում և դասաբաշխման հաստատում (զեկուցող՝ տնօրեն) 7. Առարկայական օլիմպիադաների արդյունքների քննարկում: (զեկուցող՝ տնօրեն)	**Հունվար**	
	Վեցերորդ նիստ		
	1.Նախորդ մեթոդմիավորման նիստի որոշումների կատարման մասին մեթոդմիավորման նախագահի զեկուցումը: 2.Թեմատիկ պլաններում փոփոխությունների քննարկում:	**Փետրվար**	

	3.Հունվար ամսվա աշխատանքների արդյունքների քննարկում: 4.Դասերի ընթացքում միավորային գնահատման վիճակի քննարկում: 5. Հերթական ատեստավորման ենթակա ուսուցիչների կազմի քննարկում և հաստատում (զեկուցող՝ տնօրեն)		
Յոթերորդ նիստ			
	1.Ուսումնական հաստատության մանկավարժական խորհրդի նիստի օրակարգի հաստատում. անդրադարձ նախորդ նիստին (զեկուցող՝ տնօրեն) 2. 2022-2023 ուստարվա շրջանավարտների պետական ավարտական, միասնական և կենտրոնացված քննությունների նախապատրաստման հետ կապված հարցերի քննարկում, ինչպես նաև սովորողների կողմից ընտրված ավարտական քննական առարկաների ցանկի իրազեկում (զեկուցող՝ տնօրեն, տնօրենի ուսումնական աշխատանքի գծով տեղակալ) 3. Խմբակների կատարած աշխատանքի ներկայացում: / հաղորդող՝ խմբակավարներ/ 4. Օրենքով սահմանված կարգով սովորողի նկատմամբ կարգապահական տույժ կամ խրախուսանքի միջոց կիրառելու հարցը (զեկուցող՝ տնօրեն, տնօրենի ուսումնական աշխատանքի գծով տեղակալ) 5.Էլեկտրոնային մատյանը վարելու հարցի քննարկում:	**Մարտ**	
	Ութերորդ նիստ		
	1. 1.Ուսումնական հաստատության մանկավարժական խորհրդի նիստի օրակարգի հաստատում.	**Ապրիլ**	

	անդրադարձ նախորդ նիստին (զեկուցող՝ տնօրեն) 2. Քննական առարկաների դասավանդման վիճակը 1-9-րդ դասարաններում 3. Ուսման մեջ սովորողների առաջադիմության արդյունքների ամփոփում (զեկուցող՝ տնօրենի ուսումնական աշխատանքի գծով տեղակալ) 4. էլեկրոնային մատյանների գրանցման, գնահատման, բացակայությունների հարցի քննարկում (զեկուցող՝ տնօրենի ուսումնական աշխատանքի գծով տեղակալ)		
	Իններորդ նիստ		
	1. 1-3-րդ և 5-8-րդ դասարանների աշակերտներին հաջորդ դասարան փոխադրելու մասին 2. գովասանագրերով պարգևատրելու մասին. 3. 4-րդ և 9-րդ դասարանների աշակերտներին քննություններին թույլատրելու մասին. 4. քննությունների նախապատրաստական աշխատանքների մասին	**Մայիս**	
	Տասերորդ նիստ		
	1. 4-րդ դասարանների աշակերտներին հաջորդ դասարան փոխադրելու մասին. 2. 9-րդ դասարանների շրջանավարտների դպրոցն ավարտելու մասին. 3. Ամառային առաջադրանք և վերաքննություն տալու մասին. 4. Նույն դասարանում թողնելու մասին.	**Հունիս**	

Տնօրենի կողմից հրավիրվող խորհրդակցություններում քննարկվող հարցերը

	Թեման	**Ժամկետը**	**Պատասխանատուները**
1	Ռազմագիտության դասավանդման վիճակը, քաղաքացիական պաշտպանության և		

	ռազմահայրենասիրական դաստիրակության հարցերը դպրոցում:		
2	Դպրոցում անհրաժեշտ սանիտարահիգիենիկ պայմանների, առողջության պահպանման հարցը:		
3	Առանձին ուսումնական առարկաների դասավանդման վիճակը դպրոցում, դրանց կատարելագործման ուղիները:		
4	Հասարակագիտության, Հայրենագիտության, Ես և շրջակա աշխարհը, բնագիտություն առարկաների դասավանդման վիճակը:		
5	Հոբելյանական տարեթվերի նշման, էքսկուրսիաների և տարբեր տեսակի միջոցառումների կազմակերպման վիճակը:		
6	1-9-րդ դասարաններում ճանապարհային երթևեկության կանոնների ուսուցման մասին:		
7	1-4-րդ դասարաններում դասավանդվող առարկաների դրվածքի ուսումնասիրում քննարկում:		
8	Ուսուցիչների կողմից էլեկտրոնային դասամատյանների վարում	https://matyan.emis.am/#/login կայքում ուսուցիչների կողմից աշխատանքների պարտաճանաչ կատարման ապահովում	
9	Ուսուցիչների կողմից բացթողնված դասաժամերի փոխարինում	Ուսումնադաստիար ակչական անխափան գործընթացի ապահովում	
10	Հաստատության ուսուցիչների կողմից բոլոր դասերի պլանավորման առկայության մշտադիտարկում	Ուսուցիչների կողմից կազմած օրվա թեմատիկ պլանների վերահսկողություն	

11	Սովորողների առաջադիմության նկատմամբ վերահսկողություն (ՆԴՎ)	Սովորողների մոտ ձևավորված գիտելիքների, հմտությունների, դիրքորոշման, արժեքային մոտեցումների ուսումնասիրություն և դիտարկում	
12	Սովորողների վարքի նկատմամբ հսկողության իրականացում	Հաստատության կոլեգիալ կառավարման մարմնի (խորհուրդ) կողմից հաստատած ներքին կարգապահական, այդ թվում՝ աշխատողների և սովորողների վարքագծի կանոնների պահպանում	
13	Սովորողների ուսումնական պարապմունքների մշտադիտարկում	Ուսումնական հաստատության և դասարանի մակարդակներում ուսումնական գործընթացի համակարգված հսկողության իրականացում	
14	Ուսուցիչների կողմից էլեկտրոնային դասամատյանների վարման մշտադիտարկում	Էլեկտրոնային դասամատյանների պատշաճ լրացման ապահովում	
15	Ուսումնադաստիարակչական աշխատանքների վիճակի մասին հաշվետվությունների կազմում և ներկայացում մանկավարժական խորհրդի նիստում	Հաշվետվությունների կազմում ուսումնադաստիարակչական աշխատանքների՝ մասնավորապես սովորողների առաջադիմության և ուսուցիչների մասնագիտական զարգացման վերաբերյալ՝ հիմնվելով մեթոդական միավորումների և	

		ուսուցիչների ներկայացրած հաշվետվությունների, եզրակացությունների հիման վրա	
16	Դասապրոցեսի վերահսկողություն դասալսումների միջոցով	Ուսուցչի կողմից իր դասավանդած առարկայի ուսուցման և ուսումնական գործընթացում ուսուցման նոր մեթոդների ու տեխնոլոգիաների ներդրման ապահովում, վերահսկում	
17	2022-2023 ուստարվա շրջանավարտների ավարտական, կենտրոնացված ավարտական և պետական ավարտական քննությունների նախապատրաստման աշխատանքների քննարկում մանկավարժական խորհրդի նիստում	Սովորողների համար ավարտական, կենտրոնացված ավարտական և պետական ավարտական քննությունների պատշաճ կազմակերպման ապահովում	

Առարկայական շաբաթների կազմակերպման գրաֆիկ

Հ/Հ	Առարկան	Ամիսը	Շաբաթը	Դասարանը	Պատասխանատուն
1	Հայոց լեզու և գրականություն	Դեկտեմբեր, ապրիլ	1-ին, 3-րդ	7-12	Հակոբյան Ռաֆիկ
2	Մայրենի, մաթեմատիկա	Դեկտեմբեր, մայիս	2-րդ, 2-րդ	1-4	Արզումանյան Արևիկ
3	Ռուսաց լեզու	Հոկտեմբեր փետրվար	3-րդ, 4-րդ	2-11	Էլեոնորա Կադոմցևա
4	Քիմիա, ֆիզիկա, կենսաբանություն	Նոյեմբեր, ապրիլ	2-րդ, 1-ին	7-11	Գրիգորյան Արշավիր
5	Անգլերեն	Հունվար, մարտ	4-րդ, 3-րդ	3-11	Էլեոնորա Կադոմցևա
6	Մաթեմատիկա, ինֆորմատիկա	Հոկտեմբեր, մարտ	4-րդ, 2-րդ	6-12	Գրիգորյան Արշավիր

7	Աշխարհագրություն	Նոյեմբեր, մայիս	3-րդ, 3-րդ	6-11	Գրիգորյան Արշավիր
8	Տեխնոլոգիա	Սեպտեմբեր, փետրվար	4-րդ, 3-րդ	2-7	Բալյան Սիլվա
9	Պատմություն	Սեպտեմբեր, փետրվար	4-րդ, 2-րդ	6-12	Հակոբյան Ռաֆիկ
10	Ֆիզկուլտուրա ՆԶՊ	Հոկտեմբեր, մայիս	Ամբողջ ամիսը	1-12	Բալյան Սիլվա
11	Կերպարվեստ երաժշտություն	Փետրվար, մարտ	2-րդ, 1-ին	1-7	ցցԲալյան Սիլվա

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ, ՈՒՍՈՒՄՆԱՆՅՈՒԹԱԿԱՆ ԲԱԶԱՅԻ ՀԱՐՍՏԱՑՈՒՄ

1. Կազմել դասաբաշխումը և նրա հիման վրա տարիֆիկացիոն մատյանը:
2. Կազմել ծախսերի նախահաշիվը, հաստիքացուցակը և դպրոցի խորհրդի կողմից հավանության արժանանալուց հետո ներկայացնել Սյունիքի մարզպետի հաստատմանը:
3. Բանկում ունենալ բյուջետային և արտաբյուջետային հաշիվներ:
4. Դպրոցի շենքի և գույքի վերանորոգման, նոր գույքի ձեռք բերման համար դիմել մարզպետին, Ազգային ժողովի պատգամավորներին:
5. Տարվա ընթացքում ձեռք բերել անհրաժեշտ քանակությամբ գույք, ուսումնադիտողական պարագաներ, սպորտային գույքի, օժանդակ նյութեր և գործիքներ. լաբորատոր սարքավորումներ:
6. Բարեկարգ վիճակում պահել դպրոցի շենքի բակը, մարզահրապարակը:
7. Հսկողություն սահմանել սովորողների սննդի կազմակերպման նկատմամբ:
8. Աշխատանք տանել դպրոցական գույքի, սարքավորումների, ուսումնական տեխնիկական միջոցների, դիտակտիկ պարագաների և այլ նյութերի օգտագործման և պահպանման ուղղությամբ:
9. Դպրոցական գույքն ու սարքերը բաժանել համապատասխան դասարանների, կաբինետների միջև, ակտով հանձնել կաբինետի վարիչներին, ուսուցիչներին և մյուս պատասխանատու անձանց:
10. Մշտական հսկողություն սահմանել շենքի և գույքի պահպանման, ընթացիկ վերանորոգման հարցում:
11. Բարձրացնել դպրոցի տեխնիկական անձնակազմի պատասխանատվությունը շենքի և շրջակայքի մաքրության հարցում:
12. Միջոցներ ձեռնարկել դպրոցի արտաբյուջետային հաշիվ գումարներ փոխանցելու համար /հովանավորներից, ծնողներից, կազմակերպություններից/:
13. Կատարել դպրոցի հաշվեկշռում եղած գույքի, սարքավորումների հաշվառում և անհրաժեշտության դեպքում ներկայացնել խոտանման:
14. Հետևել էլեկտրաէներգիայի, ջրի և գազի խնայողությանը:

15. Հետևել դպրոցի ջեռուցման ներքին ցանցին անխափան աշխատանքին:
16. Աշխատավարձի ֆոնդի տնտեսումների հաշվին հնարավորության դեպքում խրախուսել աշխատողներին:
17. Ժամանակին լրացնել և հանձնել ֆինանսական հաշվետվությունները:
18. Միջոցներ ձեռնարկել ձմռանը դպրոցի շենքի ջերմամեկուսացման համար: Աշխատանքներ տանել կաթսայատունն ու ջեռուցման համակարգը կարգավորելու, ջեռուցման շրջանը պատրաստված անցկացնելու համար:
19. Ժամանակին լրացնել աշխատողների հաշվետախտակը, վճարել աշխատավարձը:
20. Ապահովել շենքի ջերմային, լուսային և օդային ռեժիմը: Կանոնավոր վիճակում պահել հակակրդեհային միջոցները:

ՆԵՐԱՌԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

- Նվազագույնի հասցնել կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների համար ստեղծված խոչնդոտները:
- Կատարել ուսումնասիրություններ ԿԱՊԿՈՒ ունեցող երեխաների ի հայտ բերելու և գնահատման կենտրոն ներկայացնելու համար:
- Ռեսուս սենյակների համալրում ուսումնադաստիարակչական և համապատասխան խաղերով և իրերով:
- Ներառական կրթությունը ավելի լավ կազմակերպելու համար մասնակցել վերադասի կողմից կազմակերպվող վերապատրաստման դասընթացներին:
- Դպրոցի ներսում կազմակերպել զրույցներ:
- Հատկացնել և պլանավորել մանկավարժահոգեբանական աջակցության թիմի կատարելիք աշխատանքը:
- Մանրակրկիտ ուսումնասիրել նոր ընդունված ԿԱՊԿՈՒ աշակերտների դպրոցական փաստաթղթերը:
- Հավուր պատշաճի կազմակերպել աշակերտների ընտանիքի սոցիալական պատմության կազմումը:
- Կազմակերպել ԿԱՊԿՈՒ աշակերտների ծնողական ժողովների մանկավարժահոգեբանական աջակցման թիմի մասնակցությունը հեռավար հարթակում:
- Ուսումնասիրել և հաստատել ԿԱՊԿՈՒ աշակերտների հետ անհատական կամ խմբային պարապմունքների գրաֆիկը:
- Հսկողության տակ պահել ԿԱՊԿՈՒ աշակերտների համար կազմված անհատական ուսուցման պլանների շարունակական վերանայումը:
- Ժամանակին կազմել և հաստատել ԿԱՊԿՈՒ աշակերտների համար կազմված անհատական ուսուցման պլանները:
- Ամենայն լրջությամբ իրականացնել անհատական ուսուցման պլանների ամփոփումը:
- Բարձր մակարդակով անցկացնել ծնողների և ուսուցիչների հետ ՄՀԱԹ-ի կողմից կազմակերպված սեմինար-քննարկումները:
- Կազմակերպված անցկացնել ՄՀԱԹ-ի ամենամյա խորհրդակցություններ:
- Պարբերաբար անդրադառնալ ԿԱՊԿՈՒ աշակերտների ուսուցման և դաստիարակության ոլորտում առաջացած խնդիրներին և դրանց լուծում տալ:

Ուսումնադաստիարակչական աշխատանքների օրացույցային պլան 2022-2023 ուստարի

Շաբաթներ	Վերահսկողության նպատակը և առարկան	Ստուգման ձևը	Դասարանը	Կատարման ժամկետը	Կատարման պատասխանատու/մասնակից/
Առաջին շաբաթ 01-02.09. 05-09.09.22.	Դասարանների նախապատրաստվա-ծությունը, դասագրքերի բախշվածությունը, թեմատիկ պլաններ, գիտելիքի օր, «Առաջին զանգ»	Դիտում, հարցում, մասնակցություն	1-12-րդ դասարաններ		Տնօրեն, տեղեկալներ, դասղեկներ, խորհրդի անդամներ
Երկրորդ շաբաթ 12-16.09.22.	Ընդհանուր աշակերտական ժողով,մեթոդմիավորման նիստեր,խորհրդանիշների առկայությունը դասարաններում, դասղեկական մ/մ նիստ	Մասնակցություն դիտում	5-12-րդ դասարաններ		Տնօրեն, տեղակալներ, դասղեկներ, մ/մ անդամներ
Երրորդ շաբաթ 19-23.09.22.	Աշակերտների ապահովածությունը գրենական պիտույքներով, Շաբաթօրյակ, «Ազատ Անկախ Հայաստան» միջոցառման նախապատրաստում, դպրոցի ծնողական խորհուրդների ձևավորում	Մասնակցություն դիտում	1-12-րդ դասարաններ		Տնօրեն, տեղեկալներ, դասղեկներ, ծնողներ
Չորրորդ Շաբաթ 26-30.09.22.	Դասամատյանների, մ/մ նախագահների աշխ. պլանների ստուգում ,«Անկախության օր» տասնօրյակի ամփոփում	Դիտում, հարցում, մասնակցություն,	1-12-րդ դասարան		Տնօրեն, տեղեկալներ, դասղեկներ, խորհրդի անդամներ, համայնքի անդամներ
Հինգերորդ շաբաթ 03-07.10.22.	Մաթեմատիկայի դրվածքը, «Անկախության» տասնօրյակի եզրափակումը ,,Ուսուցչի օր,, միջոցառումների շարք	Դիտում, հարցում, մասնակցություն	5-12-րդ դասարան		Տնօրեն, տեղակալներ, դասղեկներ, մ/մ անդամներ
Վեցերորդ Շաբաթ 10-14.10.22.	Բանավոր խոսքի զարգացումը ,,Ընթերցանություն,,	Դիտում, հարցում, մասնակցություն	1-12-րդ դասարան		Տնօրեն, տեղակալներ, ԴԱԿ, դասղեկներ, մ/մ անդամներ, խորհրդի անդամներ
Յոթերորդ Շաբաթ	Մայրենիի ուսուցման դրվածքը տարրական դպրոցում	Դիտում, հարցում, մասնակցություն	1-12-րդ դասարան		Տնօրեն, տեղակալներ, ԴԱԿ

17-18.10.22.	Աշակերտական խորհրդի նախագահի ընտրություն, այցելություններ հուշահամալիրներ, ,,Ա հնչյուն տառի շնորհանդես,,				դասղեկներ, մ/մ անդամներ, խորհրդի անդամներ, ծնողներ
Ութերորդ շաբաթ 31.10-04.11.22	Առարկայական մասնախմբերի աշխատանքների քննարկում և անելիքների կանխանշում, «Կլոր սեղան.» ԾԽ և ԱԽ-ի մասնակցությամբ, ռուսաց լեզվի դրվածքը միջին դասարաններում	Դիտում, հարցում, մասնակցություն, ուսումնասիրում	5-9-րդ դասարաններ		Տնօրեն,Տեղակալներ,ԴԱ կազմակերպիչ, դասղեկներ, մ/մ անդամներ, խորհրդի անդամներ, համայնքի անդամներ, ծնողներ
Իններորդ շաբաթ 07-11.11.22.	Աշխարհագրության դրվածքի ստուգում 9-րդ և 10-րդ դասարաններում, Համադպրոցական սպորտային խաղեր, «Աշնան տոն» միջոցառումների նախապատրաստում,	Դիտում, հարցում, մասնակցություն,	5-12-րդ դասարաններ		Տնօրեն,Տեղակալներ,ԴԱ կազմակերպիչ, դասղեկներ, մ/մ անդամներ, ծնողներ
Տասներորդ շաբաթ 14-18.11.22.	Թեմատիկ և աշխատանքային տետրերի, գրավորների քանակի և որակի ստուգում, «Աշնան տոն» միջոցառման անցկացում, բնագիտական առարկաներից վիկտորինաներ	Դիտում, հարցում, մասնակցություն, ուսումնասիրում	5-12-րդ դասարաններ		Տնօրեն, տեղակալներ, դասղեկներ,մ/մ անդամներ
Տասնմեկերորդ շաբաթ 21-25.11.22.	Ուսումնասիրություն ավարտական դասարաններում, Կենսաբանության դրվածքի ստուգում	Դիտում, մասնակ ցություն, ուսումնասիրում	9-րդ և 12-րդ դասարաններ		Տնօրեն, տեղակալներ, դասղեկներ,մ/մ անդամներ
Տասներկուերորդ շաբաթ 28.11-02.12.22.	Թեմատիկ և աշխատանքային տետրերի, ընթացիկ գրավորների քանակի և ստուգում տարրական դպրցում, «Վնասակար սովորույթների ասենք ո՛չ» թեմայով միջոցառման կազմակերպում. Զրույցներ և քննարկումներ. վարքականոնի մշակում և ընդունում	Դիտում, մասնակցություն, ուսումնասիրում	1-4-րդ դասարաններ		Տնօրեն, տեղակալներ, դասղեկներ, մ/մ անդամներ
Տասներեքերորդ շաբաթ	Խմբակների և արտադասարանական աշխատանքների	Դիտում, մասնակցություն, ուսումնասիրում	5- 12-րդ դասարաններ		Տնօրեն, տեղակալներ, ԴԱԿ,

05.09.12.22	գորշունեությունը, էլ. դասամատյաների ստուգում				դասղեկներ, մ/մ անդամներ,
Տասնչորսերորդ շաբաթ 12-16.12.22.	<<Շնորհավոր ամանոր և Սուրբ Ծնունդ>> միջոցառումների շարքի նախապատրաստում, Կերպարվեստի դրվածքի ստուգում	Դիտում, մասնակցություն, ուսումնասիրում	5-12-րդ դասարաններ		Տնօրեն, տեղակալներ, ԴԱԿ, դասղեկներ, մ/մ անդամներ,
Տասնհինգերորդ շաբաթ 19-23.12.22.	<<Շնորհավոր ամանոր և Սուրբ Ծնունդ>> միջոցառումների շարքի անցկացում	Դիտում, մասնակցություն, ուսումնասիրում	5-12-րդ դասարաններ		Տնօրեն, տեղակալներ, ԴԱԿ, դասղեկներ, մ/մ անդամներ
Տասնվեցերորդ շաբաթ 09-13.01.23.	Լաբարատոր և գործնական աշխատանքներիհամապատասխանությունը ծրագրերին և չափորոշչին	Դիտում, մասնակցություն, ուսումնասիրում	5-12-րդ դասարաններ		Տնօրեն, տեղակալներ, դասղեկներ, մ/մ անդամներ, լաբորանտներ
Տասնյոթերորդ շաբաթ 16-20.01.23.	Առարկայական օլիպիադաների դպրոցական փուլի/տասնօրյակ/ ամփոփում, սպորտային մրցումների կազմակերպում/բասկետբոլ, վոլեյբոլ/	Դիտում, մասնակցություն, ուսումնասիրում	5-12-րդ դասարաններ		Տնօրեն, տեղակալներ, ԴԱԿ, դասղեկներ, մ/մ անդամներ,
Տասնութերորդ շաբաթ 23-27.01.23.	Ծրագրային նյութերի կատարման համապատասխանությունը ծրագրերին և չափորոշչին, կազմակերպել միջոցառում՝ «Հզոր բանակ» խորագրով, «Իմ զինվորը» անկյունի ձևավորում	Դիտում, մասնակցություն, ուսումնասիրում	1-12-րդ դասարաններ		Տնօրեն, տեղակալներ, դասղեկներ, մ/մ անդամներ
Տասնիններորդ շաբաթ 30.01-03.02.23.	Նոր կիսամյակի ընթացքում կատարելիք աշխատանքների կարգաբերում և քննարկում, անգլերենի դրվածքի ստուգում	Դիտում, մասնակցություն, ուսումնասիրում	1-12-րդ դասարաններ		Տնօրեն, տեղակալներ, ԴԱԿ, դասղեկներ, մ/մ անդամներ, խորհրդի անդամներ, ուսուցիչներ
Քսաներորդ շաբաթ 06-10.02.23.	Վիկտորինա տարրական դպրոցում ,,Ես և շրջակա աշխարհը,, առարկայից, Ամենայն հայոց բանաստեղծին նվիրված շաբաթվա նախապատրաստական աշխատանքների իրականացում	Դիտում, մասնակցություն, ուսումնասիրում	1-12-րդ դասարաններ		Տնօրեն, տեղակալներ, ԴԱԿ, դասղեկներ, մ/մ անդամներ, խորհրդի անդամներ, ուսուցիչներ

Քսանմեկերորդ շաբաթ 13-17.02.23.	Ամենայն հայոց բանաստեղծին նվիրված շաբաթ, Թումանյանի հեքիաթների բեմականացում, շարադրություններ	Դիտում, մասնակցություն, ուսումնասիրում	7-12-րդ դասարաններ		Տնօրեն, տեղակալներ, ԴԱԿ, դասղեկներ, մ/մ անդամներ, ծնողներ
Քսաներկուերորդ շաբաթ 20-24.02.23.	Մայրենի լեզվի տոն Կազմակերպել միջոցառում՝ «Մայրենին իմ հոգու լեզուն է» խորագրով, տեխնոլոգիա առարկայի դրվածի ստուգում	Դիտում, մասնակցություն, ուսումնասիրում	1-12-րդ դասարաններ		Տնօրեն, տեղակալներ, ԴԱԿ, դասղեկներ, մ/մ անդամներ, խորհրդի անդամներ, ուսուցիչներ, համայնքի անդամներ, ծնողներ
Քսաներեքերորդ շաբաթ 27.02-03.03.23.	Հանդիպում ՕԽ-ի հետ, կլոր սեղան <<Երեխան ընտանիքում>> թեմայով, ռուսաց լեզվի դրվածքի ստուգում ավագ դպրոցում	Դիտում, մասնակցություն, ուսումնասիրում	1-12-րդ դասարաններ		Տնօրեն, տեղակալներ, դասղեկներ, ծնողներ
Քսանչորսերորդ շաբաթ 03-07.03.23.	Տարրական դպրոցի աշակերտների հմտությունների և կարողությունների բացահայտում գործնական աշխատանքնեևի միջոցով /տեխնոլոգիա, շրջակա, կերպարվեստ, շախմատ, երգ, ֆիզկուլտուրա/	Դիտում, մասնակցություն, ուսումնասիրում	1-4-րդ դասարաններ		Տնօրեն, տեղակալներ, ԴԱԿ, դասղեկներ, մ/մ անդամներ
Քսանհինգերորդ շաբաթ 10-14.03.23.	Մաթեմատիկա և ինֆորմատիկա առարկաների դրվածքը դպրոցում, Ամենագեղեցիկ ձեռագիրը >> մրցույթ	Դիտում, մասնակցություն, ուսումնասիրում	1-12-րդ դասարաններ		Տնօրեն, տեղակալներ, ԴԱԿ, դասղեկներ, մ/մ անդամներ, խորհրդի անդամներ, ուսուցիչներ, ծնողներ
Քսանվեցերորդ շաբաթ 20-24.03.23.	Մայրության և գեղեցկության տոներին ընդառաջ՝ միջոցառումների միամսյակի շարունակական անցկացում	Դիտում, մասնակցություն, ուսումնասիրում	8-12-րդ դասարաններ		Տնօրեն, տեղակալներ, ԴԱԿ, դասղեկներ, մ/մ անդամներ, ծնողներ
Քսանյոթերորդ շաբաթ 03-07.04.23.	Գարնանային հանդես, Գարնանային նկարների մրցույթ, «Մա'յր ...» միջոցառման կազմակերպում	Դիտում,մասնակ ցություն, ուսումնասիրում	1-12-րդ դասարաններ		Տնօրեն, տեղակալներ, ԴԱԿ, դասղեկներ, մ/մ անդամներ, ծնողներ

Քսանութերորդ շաբաթ 09-14.04.23.	Կազմակերպել Սուրբ Զատկին նվիրված միջոցառումներ, Ազգային խաղեր, Վիկտորինա հումանիտար առարկաներից	Դիտում, մասնակցություն, ուսումնասիրում	1-12-րդ դասարաններ		Տնօրեն, տեղակալներ, ԴԱԿ, դասղեկներ, մ/մ անդամներ, խորհրդի անդամներ, ուսուցիչներ
Քսանիններորդ շաբաթ 17-21.04.23.	Ծրագրերի կատարման ընթացքի ստուգում	Դիտում, մասնակցություն, ուսումնասիրում	1-12-րդ դասարաններ		Տնօրեն, տեղակալներ, ԴԱԿ, դասղեկներ, մ/մ անդամներ,
Երեսուներորդ շաբաթ 24-28.04.23.	Մեթոդմիավորումների աշխատանքների կատարման ընթացքը, ծրագրավորածի արդյունքները չկատարվածի պատճառների քննարկում	Դիտում, մասնակցություն, ուսումնասիրում	1-12-րդ դասարաններ		Տնօրեն, տեղակալներ, ԴԱԿ, դասղեկներ, մ/մ անդամներ,
Երեսունմեկերորդ շաբաթ 01-05.05.23.	Գարնանային էքսկուրսիաներ տեսարժան վայրեր, միասնական քննությունների վերջնական հայտագրում	Դիտում, մասնակցություն, ուսումնասիրում	1-12-րդ դասարաններ		Տնօրեն, տեղակալներ, ԴԱԿ, դասղեկներ, մ/մ անդամներ, ուսուցիչներ
Երեսուներկուերորդ շաբաթ 08-12.05.22.	Խաղաղության և հաղթանակի տոներ, աշխատանքի արդյունքի բերկրանքը, մայիսյան եռատոն, ֆուտբոլի մրցաշարի կազմակերպում	Մասնակցություն կազմակերպում, այցելություն	1-12-րդ դասարաններ		Տնօրեն, տեղակալներ, ԴԱԿ, դասղեկներ, մ/մ անդամներ, ուսուցիչներ
Երեսուներեքերորդ շաբաթ 15-19.05.23.	Մաթեմատիկայից, հայոց լեզվից գրավոր աշխտանքների քանակների միջոցով 4-րդ, 9-րդ և 12-րդ դասարաններում քննության նախապատրաստում	Դիտում, մասնակցություն, ուսումնասիրում	4,9 և 12-րդ դասարաններ		Տնօրեն, տեղակալներ, մ/մ անդամներ,
Երեսունչորսերորդ շաբաթ 22-26.05.23.	Թեմատիկ և ամփոփիչ գրավորներ, կիսամյակային ամփոփում, Վերջին դաս, վերջին զանգ, հրաժեշտ դպրոցին	Մասնակցություն կազմակերպում, դիտում, ստուգում	1-12-րդ դասարաններ		Տնօրեն, տեղակալներ, ԴԱԿ, դասղեկներ, մ/մ անդամներ, խորհրդի անդամներ, ուսուցիչներ
Երեսունհինգերորդ շաբաթ 29.05-02.06.23.	Բացակայությունների ամփոփում, քննության և ստուգարքի կազմակերպում, քննակարգի	Մասնակցություն կազմակերպում, ամփոփում	1-12-րդ դասարաններ		Տնօրեն, տեղակալներ, ԴԱԿ, դասղեկներ, մ/մ անդամներ, խորհրդի

	մասայականացում /120-200 ժամ ունեցող/				անդամներ, ուսուցիչներ